ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

09.6.2017 թ.

1112/11303-17

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
ք.Երեւան, Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ս.թ. հունիսի 2-ի Ձեր հարցման՝ (համար 318-ի 7) հայտնում ենք, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատողների թվաքանակը սահմանվում է ՀՀ Կառավարության 2008թ. հուլիսի 3-ի թիվ 692-Ն որոշմամբ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008թ. հուլիսի 3-ի թիվ 692-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության **2014թ. նոյեմբերի 6-ի թիվ 1214-Ն որոշման**՝ կից ներկայացնում ենք 2015թ. հունիսի 1-ի դրությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Աշխատողների առավելագույն թվաքանակը	որից՝ ղեկավարի տեղակալներ	
		ընդամենը	այդ թվում՝ առաջին տեղակալ
Նախարարության աշխատակազմ	278	4	-
այդ թվում՝			
կառուցվածքային ստորաբաժանումներ	250	4	-
«Պետական արարողակարգի ծառայություն» գործակալություն	28	2	-

»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008թ. հուլիսի 3-ի թիվ 692-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին **ՀՀ Կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի թիվ 161-Ն որոշման**՝ կից ներկայացնում ենք 2016թ. հունիսի 1-ի և 2017թ. հունիսի 1-դրությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Աշխատողների առավելագույն թվաքանակը	որից՝ ղեկավարի տեղակալներ	
		ընդամենը	այդ թվում՝ առաջին տեղակալ
Նախարարության աշխատակազմ	299	5	-
այդ թվում՝			
կառուցվածքային ստորաբաժանումներ	271	5	-
«Պետական արարողակարգի ծառայություն» գործակալություն	28	2	-

»:

Հայտնում ենք նաև, որ 2015թ. հունիսի 1-ի դրությամբ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հաստիքային փորձագետ չի ունեցել, 2016թ. հունիսի 1-ի դրությամբ ունեցել է 2, իսկ 2017թ. հունիսի 1-ի դրությամբ՝ մեկ փորձագետ:

Ինչ վերաբերում է հարցման վերջին մասին, ապա նշենք, որ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը աշխատակազմի ղեկավարի տեղակալի հաստիք չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Jun 9 2017 11:06 AM

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐ Է
ELECTRONIC SIGNATURE IS VALID
GENERAL DEPARTMENT

Կատարող՝ Միսակ Բալայան
Հեռ.՝ (060) 620-218